Կարս. Հայոց բանահյուսական մշակույթը, *կազմողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Բ. Հարությունյան (գիտական ղեկավար), Ս. Ա. Վարդանյան, Է. Հ. Խեմչյան, Լ. Խ. Ղռեջյան, Մ. Հ. Խեմչյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2013, 750 էջ:*

Հայ ժողովրդի բռնագավթված տարածքների մասին մշակութային որևէ նշխար հայտնաբերել և ուսումնասիրության նյութ դարձնելը մեր օրերում, իրոք, կարևոր իրադարձություն է: Մանավանդ, երբ այն վերաբերում է ժողովրդական բանավոր ավանդությանը, որը երբևէ հնչել է տեղի հայության խոսքաշրեն բնակչության կողմից, այնինչ տասնամյակներ շարունակ այդ վայրերն ամայացած են, չի հնչում հայ լեզուն, հայ խոսքը, ավերակված են ճարտարապետական շատ ու շատ հոյակերտ կոթողներ, որոնց միայն տխուր հետքերն են մնացած որպես վկայություն երբեմնի ճոխ ու շքեղ հայկական քաղաքակրթության…



Այս անգամ խոսքը վերաբերում է հայոց երբեմնի Կարս (Կարուց) քաղաքին, որն ինչպես Ներսես Շնորհալին է անվանել՝«հոյակապ քաղաք», քանի որ այն դարեր շարունակ, թեպետ սելջուկ, թաթար, մոնղոլական արշավանքների հետևանքով բազմիցս ձեռքից ձեռք է անցել, սակայն չի կորցրել իր տնտեսական, առևտրական և ռազմավարական կարևոր նշանակությունը:

Երբեմնի Կարս քաղաքի և շրջակա գյուղերի հայոց բանավոր մշակույթի մի բերված բեկորներին է նվիրված ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի լույս ընծայած «Կարս. Հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուն: Հատորում առաջին անգամ տեղ են գտել տարբեր ժամանակներում, տարբեր անհատների կողմից գրի առնված Կարսի հայության բանահյուսական և ժողովրդական մշակույթի ամենատարբեր տեսակները՝ հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ, զվարճախոսություններ, աշխատանքային, ծիսական, օրորոցային, ազգային-ազատագրական պայքարին նվիրված երգեր, խաղիկներ, առած-ասացվածքներ, դարձվածներ, անեծք-օրհնանքներ, երդումներ, կյանք ու կենցաղի, սովորությունների, ծեսերի, տոների, վարքուբարքի մասին սկզբնաղբյուրային կարևորությամբ նյութեր, ինչպես և հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունների վերաբերյալ ականատես վերապրողների հուշեր՝ նշանավոր կարսեցիների կենսագրականներով հանդերձ: Սույն ժողովածուի հրատարակմամբ ընթերցողը հաղորդակից կդառնա Կարսի հայության բանահյուսական և ժողովրդական մշակույթի տարբեր դրսևորումներին: Ժողովածուն լույս է տեսել Գիտության պետական կոմիտեի նյութական աջակցությամբ:

Ուշագրավ է, որ Կարսի ժողովրդական բանարվեստի նկատմամբ հետաքրքրություն է դրսևորվել 22 տարի առաջ՝ 1991 թ. մայիսին: Գերմանիայի Մայնց քաղաքի համալսարանի դոցենտ, պատմական գիտությունների դոկտոր Գեորգ Կոբրոն նամակ է հղել Սարգիս Հարությունյանին՝ հետևյալ խնդրանքով. □Արդյոք պահպանվա՞ծ է «Կարս, Կարս, Կարս, Երբ պիտի դու նորից տուն վերադառնաս»երկտողային կրկնակով երգը, ինչպես և Կարսի վերաբերյալ ժողովրդական այլ երգեր»: Կարսի նկատմամբ հետաքրքրությունը դոկտոր Կոբրոն պատճառաբանում էր հետևյալ հանգամանքով. «Ես գրել եմ գերմաներեն լեզվով մենագրություն՝ «Պատմություն Կարսի մասին» խորագրով և շարունակում եմ նյութեր հավաքել այդ թեմայով: Զգտում եմ փառաբանել Կարսը, որպես հայոց պատմական քաղաք Եվրոպական ժողովուրդների գիտակցության մեջ»: Գերմանացի պատմաբանի ցանկությանն անմիջապես արձագանքել է Սարգիս Հարությունյանը, տպագիր և անտիպ աղբյուրներից ընտրելով Կարսի վերաբերյալ պատմական

երգեր, ավելացնելով նաև «Երգ Կարսի մասին» բանաստեղծության մի նոր տարբերակ: Ստացվել է հիացական պատասխան՝ նոր ցանկության հավելումով. երգերի հայերեն բառերն ուղարկել հայերեն տառերով, որպեսզի ինքը կարողանա գերմաներեն թարգմանությանը կից ներկայացնել նաև հայերեն բնագրերը: Ի դեպ, Գեորգ Կոբրոյի Սարգիս Հարությունյանին ուղղված շնորհակալական նամակը զետեղված է սույն ժողովածուի առաջին էջի ծանոթագրության մեջ:

Ժողովածուն կազմված է նախաբանից և ներածությունից (Սարգիս Հարությունյան), ինչպես նաև բնագրերից՝ նշանավոր կարսեցիներ, ազգագրական նյութեր, ծեսեր, սովորություններ, հավատալիքներ (Սվետլանա Վարդանյան), առաջաբանից, ծանոթագրություններից և ամփոփումներից (Էսթեր Խեմչյան), հեքիաթների միջազգային տիպերն ըստ Անտի Արնեի համակարգման (Լուսինե Ղռեջյան), բառարան, անձնանունների, տեղանունների, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից (Մարինե Խեմչյան): Բնագրերը որոնելու, ընտրելու, համակարգելու և ժողովածուն կազմելու աշխատանքներն իրականացվել են աշխատանքային խմբի կողմից՝ Ս. Հարությունյանի ղեկավարությամբ:

Հաշվի առնելով, որ հայկական Կարսի մասին վերջին ստույգ գեղարվեստորեն պահպանված ազգագրական լավագույն տվյալները վկայված են ծնունդով կարսեցի հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի □Երկիր Նաիրի□ վեպում, գրված 1922 թ., Կարսի անկումից անմիջապես հետո՝ Ս. Հարությունյանը նպատակահարմար է գտել նախաբանում անդրադառնալ վեպում առկա ժողովրդական զրույցներին, կյանք ու կենցաղի գունեղ պատկերներին, վիպական դարձած տեղական կերպարներին և այլ մանրամասներին: Ներածության մեջ «Կարսի անկումը ըստ Գարեգին Հովսեփյանի» վերնագրի ներքո Ս. Հարությունյանը անդրադառնում է 1920 թ. հոկտեմբերին Կարսի անկման ողբերգական իրադարձությունների լուսաբանմանը, ականատես-վկա, նշանավոր հայագետ և կրոնահասարակական անվանի գործիչ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի խոհերին ու մտորումներին Կարսի անփառունակ պարտության դաժան օրերի մասին: «Նրա նկարագրությունները,– գրում է Ս. Հարությունյանը,– պատմական կարևոր նշանակություն ունեն Կարսի՝ այդ օրերի ճակատագրական անցուդարձերին գնահատական տալու համար» (էջ 17):

Առաջաբանում Է. Խեմչյանը նշում է ժողովածուի մեջ տեղ գտած տպագիր և անտիպ նյութերի ձեռքբերման աղբյուրները, ինչպես նաև նյութերի դասակարգման սկզբունքներն ու դրանց ժանրային նկարագիրը:

Առանձին բաժին են կազմում Կարսի հայկական գյուղերի կենցաղի, սովորությունների, վարքուբարքի վերաբերյալ ուշագրավ տվյալները: Կարսի նշանավոր գյուղերը՝ Նախիջևանը, Ծպնին, Հովերան (Հոպվերան), Ազարակը, Բազարանը, Փալդրվանը, Աղջաղալան, Փարկիտը, Ուզունքիլիսան և այլն, աչքի են ընկել բանահյուսական ու ազգագրական ինքնատիպ նկարագրերով: Հիշյալ գյուղերի բնակիչներին բնորոշ է եղել անմիջականությունն ու բարությունը. դեպի հիշարժան սրբավայրեր կատարվող ուխտագնացությունները կարսեցու կենցաղի անբաժանելի մասն են կազմել… Ժողովածուի մեջ տեղ գտած Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած հուշ-վկայություններն ընթերցողին գաղափար են տալիս, թե ինչպես բարեպաշտ այդ ժողովուրդը դաժան բռնությունների ու խոշտանգումների զոհ դարձավ, իսկ մնացորդացը արցունքն աչքերին ստիպված հեռացավ իր հայրենիքից…

Սկզբնաղբյուրային կարևոր արժեք ներկայացնող սույն ժողովածուն իր պատմաճանաչողական նպաստը կբերի ոչ միայն բանագետ-բանասերներին ու պատմաբան-ազգագրագետներին, այլև հասարակության լայն շրջաններին՝ հաղորդակից դարձնելով երբեմնի Կարսի հայության բանավոր ավանդության ու ժողովրդական մշակույթի ամենատարբեր ոլորտներին:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱՋԼՅԱՆ